ՄԵՐ ՁԵՌՔԵՐՈՎ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Փախստականների հիմնահարցը վերջին շրջանում կարծես թէ մոռացութեան է մատնուել: Մինչդեռ Հայաստանը ներքին ոչ քիչ հնարաւորութիւններ ունի այն լուծելու եւ հողի մասնաւորեցումը մեծապէս ընդլայնում է դրանք: Հիմնահարցը յիրաւի պէտք է լուծուի մեր սեփական ձեռքերով, ինչպէս դա արւում է Վայքի շրջանի սահմանային Վանքաձոր գիւղում:

Փախստականների աղէտալի վիճակի մասին շատ է խօսուել ու գրուել:

Այս յօդուածում ուզում եմ կոնկրետ մէկ օրինակով ցոյց տալ, որ այդ հիմնահարցը լուծելի է եւ ինչ-որ տեղ այն արդէն լուծում են: Խօսքն այստեղ Վայքի շրջանի Վանքաձոր (Նախկին Գիւմուր), ինչպէս ընդունուած է ասել, լքուած գիւղի մասին է: Վերջին թուրքերն այն թողել են 1989 թ. Յունուարին, իսկ առաջին հայերն այստեղ են եկել նոյն տարւայ Փետրուարի վերջերին:

Այժմեան վանքաձորցիները մեծ մասամբ փախստականներ են Բաքուից, Կիրովաբադից, Սումգայիթից: Մի քանի ընտանիքներ կան Խանլարի ու Դաշքեսանի շրջաններից: Ոմանք էլ այստեղ են եկել Հայաստանի տարբեր շրջաններից՝ աղէտի գօտուց, Արտաշատից, Երեւանից, Ջերմուկից ու այլ վայրերից: Վանքաձորում կարող ես լսել հայոց լեզուի բոլոր բարբառները: Սկզբում Արցախի բարբառով խօսող բաքուեցիները դժուարութեամբ էին հասկանում արտաշատցիներին ու կումայրեցիներին: Իսկ ոմանք ընդհանրապէս չէին կարողանում հայերէն խօսել:

Իհարկէ, դժուար էր նախկին քաղաքաբնակների համար՝ ապրել կաւէ խրճիթներում, որոնց նախկին բնակիչները զբաղուել էին միայն անասնապահութեամբ...

Եւ այսպէս, 1989թ. Փետրուարին այստեղ հիմնաւորուեցին մի քանի ընտանիքներ: Հիմա Վանքաձոր գիւղը Վայքի շրջանի խոշորագոյն, հեռանկարային ու արագ զարգացող գիւղերից մէկն է:

Ինչպէ՞ս տեղի ունեցաւ դա: Սկսուեց տեղական կոոպերատորշինարարներից, ովքեր ստանձնեցին տների վերանորոգումը, դրանք յատակապատելը, առաստաղելը, լուսամուտներին ապակիներ գցելը, դռներին փականներ դնելը, եւ շատ ու շատ այլ աշխատանքներ: Յետոյ կառուցեցին նոր մեքենայացուած անասնագոմ: Հին դպրոցի շէնքում բացուեց Գորիսի կարի գործարանի մասնաճիւղը: Այդպիսով հիմնականում լուծուեց նախկին քաղաքաբնակների աշխատանքի տեղաւորման խնդիրը: Նախատեսուած է կօշիկի արտադրամասի շինարարութիւնը: Դեռ մինչեւ հողի մասին օրէնքի ընդունումը Գերագոյն Խորհրդի կողմից, այգիների ու անասունների մեծ մասը բնակիչները վերցրին կապալով: Բոլոր ճանապարհներն ասֆալտապատուեցին: Բացուել է դպրոցը, որի երիտասարդ աշխատանքային անձնակազմն առաջին շրջանում քիչ դժուարութիւններ չկրեց: Չէ՞ որ դպրոցը հայկական է, իսկ բազմաթիւ աշակերտներ առաջ յաճախել էին ռուսական դպրոցներ եւ նոյնիսկ հայերէն չգիտէին: Բայց արդէն 1990թ. ամրանը ժողովրդական երգի շրջանային փառատօնում, երբ վանքաձորցի աշակերտները ոգեշնչուած հայրենասիրական երգեր կատարեցին, ոչ ոք նոյնիսկ գլխի չընկաւ, որ նրանցից շատերը ընդամենը մի քանի ամիս առաջ չէին կարողանում հայերէն խօսել: Դպրոցում անգամ հայոց լեզուի ու հայոց պատմութեան դասընթացներ են բացուած մեծերի համար: Վերանորոգուել է ակումբը, գործում է մանկապարտէզը:

Սակայն Վանքաձորում, ինչպէս ամենուր, գոյութիւն ունեն չլուծուած հիմնահարցեր: Թիւ առաջինը, ջրի բացակայութիւնն է: Ջուր չկայ ոչ միայն տնամերձների ոռոգման, այլեւ նոյնիսկ խմելու համար: Ջրի համար ստիպուած են դոյլերով գնալ 300-400 մետր հեռու գտնուող աղբիւրը: Զգձգում է խոստացուած բնական գազի անցկացումը, չկան վերանորոգման ու շինարարութեան համար անհրաժեշտ նիւթեր: Եւ իրօք, վիրաւորական է այն, որ այդ բոլոր հիմնահարցերը կարելի էր լուծել առանց յատուկ դժուարութիւնների: Պէտք է միայն շահագրգռուածութիւն եւ այդպիսի գիւղերի բնակեցման կարեւորութեան գիտակցութիւն: Չէ՞ որ Վանքաձորում ապրում են մօտ 100 ընտանիքներ, մինչդեռ կարող էին ապրել 200-250ը:

Սակայն, չնայած այդ ամենին, Վանքաձորի փորձը չափազանց արժէքաւոր է, արժէքաւոր՝ որպէս մեր հիմնահարցերը մեր ուժերով լուծելու օրինակ:

Սակայն, գիւղից ոչ շատ հեռու, երեւում է դեռ անբնակ Կապոյտ գիւղը: Այն եւս արժանացել է Վանքաձորի բախտին: Այստեղ էլ հնաւանդ հայկական խաչքարեր կան, քանդակուած ուղղակի քարափին: Ասում են, այդ գիւղի բոլոր տների հիմքերը լցուած են խաչքարերով...

Քանի՞ այդպիսի գիւղեր կան Վարդենիսի, Գորիսի, Սիսիանի, Ամասիայի եւ մեր փոքրիկ Հայաստանի այլ շրջաններում: Եւ մի՞թէ այդտեղ չեն թաղուած փախստականների, Երեւանի գերբնակեցման եւ վերջապէս, դատարկութիւնից արձագանքող խանութները լցնելու հիմնահարցերի լուծման բանալիները: Երեւում է, պէտք չէ յոյսը դնել ինչ-որ մէկի կողմից կառուցուելիք Եւրոպոլիսի վրայ: Մենք պէտք է մեր ձեռքերով կառուցենք մեր տունն ու երկիրը, ինչպէս դա արել են մեր լուսահոգի նախնիները հազար ու հազար տարիներ: